18 հուլիսի 2019 թվականի N 905 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի N 107-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունվարի 19-ի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Փարպիի գյուղական համայնքի վարչական սահմանների նկարագիրը հաստատելու և Փարպիի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» N 107-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման 3-րդ կետի «ա» ենթակետում «81.09» թիվը փոխարինել «80.22» թվով.

2) N 4 հավելվածի՝

ա. «Բնակավայրերի» տողի «որից չմասնավորեցվող» սյունակում «33.42» թիվը փոխարինել «32.55» թվով,

բ. «Ընդամենը» տողում «81.09» թիվը փոխարինել «80.22» թվով.

3) N 6 հավելվածում՝

ա. «055-001» կադաստրային ծածկագրով տողում «3.67» թիվը փոխարինել «2.80» թվով,

բ. «055-001» կադաստրային ծածկագրով տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«	055-001-01	0.87								բնակելի կառուցապատման »

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ